Հաջողություններն ու մտահոգությունները՝ կողք-կողքի

Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Որևէ էլեկտրահարվածի դեպքում պնդումները, թե մեր երկրում գիտությունն ողջ բարեկամի կարգավիճակում է գտնվում, եւ պետբյուջեի ընդամենը 3 տոկոսն այս ոլորտին տրամադրելն ամենեւին չի նպաստում գիտության զարգացմանը, այսուհանդերձ, հայաստանում գիտական միտք տեղում չի դոփում, եւ մեր գիտական ներուժը ի վիճակի է ծառայելու երկրի տնտեսության, պաշտպանունակության զարգացմանը:

Այսպիսի եզրակացության են հանգում ՀՅ գիտությունների ազգային ակադեմիայի՝ երեկ կայացած տարեկան ընդհանուր ժողովից, ուր առանձին-առանձին ներակվեցին ԳԱԱ երեք բաժանմունքների՝ ֆիզիկամաթեմատիկական եւ տեխնիկական, բնական, ինչպես նաեւ հումանիտար գիտությունների բաժանմունքների 2003 թ. գիտական եւ գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները:

Անցած տարին ինչպես նեռբերումների, այնպես էլ լուծման կարոտ խնդիրների ժառանգությամբ նշանավորվեց գիտության հայ մշակների համար: Եվ քանի որ Ակադեմիայի համար 2003-ը հոբելյանական էր, վերջինիս պատմությունը հարուցավ հոբելյանական մի շարք միջազգային գիտաժողովներով, որոնց շնորհիվ մեր գիտնականները համոզվել են, որ Հայաստանում հիմնական պահպանվում է ժամանակակից գիտության միջազգային մակարդակը:

Ֆիզիկամաթեմատիկական եւ տեխնիկական բաժանմունքի ակադեմիկոս-թղթակից, ակադեմիկոս **Էդուարդ Ղազարյանը** ուրախությամբ տեղեկացրեց, որ վերջին տասնամյակում առաջին անգամ ՀՅ պետական բյուջեից ֆինանսավորում է հատկացվելու 4 պետական նպաստակային գիտական ծրագրերի իրականացման համար, որոնցից երկուսը՝ կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկան եւ ՀՅ պետական գիտական հաավողական համակարգի ստեղծումը, ուղղակի առնչվում են տվյալ բաժանմունքի հետ: Նեռեմ, որ մյուս երկու ծրագրերը, որոնք պետությունը հարմար է գտել ֆինանսավորել, «Հայ ժողովրդի պատմության» ֆառահատոդյակի նախապատրաստումն ու հրատարակումն է եւ Հայաստանի բնական հումքից նոր հաստկությունների նյութի ստեղծումը: ԳԱԱ կառուցվածքային բաբեփոխումներից բաժին է ընկել նաեւ այս բաժանմունքին, ինչպես, օրինակ, լուծարվել է «Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտ» ՓԲԸ-ն, Բյուրականի աստղադիտարանի մաթեմատիկական ֆիզիկայի կենտրոնին տրվել է գիտական հիմնարկի կարգավիճակ նույն աստղադիտարանի կազմում եւ այլն: էդ. Ղազարյանի բնորոշմամբ՝ «ձոխ» առաջարկությունները են եղել ԳԱԱ արտասահմանյան անդամների առումով: Հինգ արտասահմանցի գիտնականներ նման կոչման են արժանացել, իսկ երկուսը դարձել են ԳԱԱ ոպավավոր դոկտորներ:

Գիտական ամսագրերի հրատարակության վիճակը եւս բարվոք համարվեց եւ ոռոնս նկատում նշվեց դրամաշնորհների միջոցով գիտական սարքավորումների ձեռքբերման փասը:

Մեր գիտնականների մտահոգություններն էլ փչ չէին: ԵՊՅ ռեկտոր, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանին** հետաքրքրում էին գիտական հիմնարկներին տրվող բազային ֆինանսավորման չափերը որոշելու սկզբունքները: Նշվեց, որ այստեղ առավելությունը տրվել է ազգային արժեք ներկայացնող սոռաբաժանումներին: Կարծիք հնչեց նաեւ թեմատիկ ֆինանսավորման անոթությանարժարության մասին: Իսկ ակադեմիկոս **Նազարեթ Մաթեւոսյանը** ամենակարեւորը համարում է գիտության ձիրս կազմակերպումը եւ գտնում է, որ մեկ ամբիոնում 4 գիտական խումբ ունենալն ուղղակի շռայլություն է ու ֆինանսների փոփոխում է նշանակում: Գիտական խորհուրդների իրավասություններ ի խնդրին անդրադարձավ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի գիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս **Դավիթ Սեդրակյանը:**

Բնական գիտությունների բաժանմունքում եւս ձեռբերումներ են արձանագրվել: Մտակվել եւ ԳԱԱ նախագահությունն են ներկայացվել բաժանմունքի ինստիտուտներում հիմնարար հետազոտությունների ու կրիտիկական տեխնոլոգիաների զարգացման հիմնական ուղղությունները, ֆնճակվել են Հայաստանի էկոլոգիական իրավիճակի հետ կապված հիմնարարներ: Բաժանմունքի նախաձեռնությամբ լույս է տեսել բնական գիտությունների նոր էլեկտրոնային հանդեսի առաջին համարը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել միջազգային գիտական կապերի ընդլայնման խնդիրներին եւ այլն:

Բաժանմունքի պատասխանատու ակադեմիկոս-ֆարսուղար, թղթակից-անդամ **Արամ Շահինյանի** զեկուցման մեջ այդ ամենի մասին խոսվեց հանգամանորեն: Նշվեց, որ 2003-ին բաժանմունքի գործունեության արդյունքն է նաեւ հրատարակված 736 գիտական հոդվածները, 21 մենագրություններ ու 12 ուսումնական ձեռնարկները: Հեռարիր է, որ սացված դրամաշնորհների 45 տոկոսը այս բաժանմունքի ինստիտուտներին է բաժին ընկնում, որոնց շնորհիվ էլ հնարավոր է դառնում բարոյապես մաշված սարքավորումների գոնե մի փոքրիկ մասը փոխարինել ժամանակակից, երբեմն՝ թանկարժեք սարքավորումներով: Վիճակն առանձնապես հուսադրող չէ կադրային առումով: Արձանագրվել գիտաշխատողների թվի անկում, հիմնական մասը՝ մինչեւ 1996-97թթ.: 1996-ից հետո պակսերն այսոքիսին է՝ դոկտորների թվի 20% աճ, թեկնածուների թվի անկում: Եզրակացությունը մեկն է՝ մասնր ներուժի ոահոպանման խնդիր ունեմ, չկա համապատասխան օրենսդրական դաշտ, մասնր սեփականությունը պաշտեպանվորելու հնարավորություն:

Գրեթե նույն ցավոտ խնդիրներն առկա են նաեւ հումանիտար գիտությունների բաժանմունքում: Այստեղ եւս մի շարք գիտական նպաստաշրջանների են անցկացվել, ինչպես «Հայագիտության առդի վիճակը եւ զարգացման հեռանկարները» թեմայով միջազգային առաջին համաժողովը, որեղ ուշագրավ հարցադրումներ եւ արժեքավոր գիտական դիտարկումներ եղան հայագիտական բոլոր ասպարեզների հիմնախնդիրների մասին: Բաժանմունքի գործունեության վերաբերյալ ակադեմիկոս-ֆարսուղարի պաշտոնակատար, ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանի** զեկուցմանը հաջորդած ելույթներում արծարծվեցին հայ գիտնականների արժանապատիվ ապրելու, հայոց պատմությունը սեռուցնների արժանապատվորեն ներկայացնելու, հայոց պեռսականության հարցերին մեծ ուշադրություն դարձնելու եւ այլ խնդիրներ:

Այսօր հայ գիտնականները կընդհանրացնեն առանձին բաժանմունքներում ֆնճակված խնդիրները եւ իրենց հետագա գործունեության ուղիներ կնախանեռեն: